

# Էքսկլուզիվ «Լրագրողներ հանուն ապագայի» անցած ուղով

Հունվար 5, 2017

Էքսկլուզիվ «Լրագրողներ հանուն ապագայի» անցած ուղով



«Լրագրողներ հանուն ապագայի» հասարակական կազմակերպությունն իր հիմնադրման պահից (2007թ.) ակտիվ գործունեություն է ծավալում հայաստանյան լրագրության, մեդիադաշտի, վիճակագրական տվյալների, հեղինակային իրավունքի, տեղեկատվական տեխնոլոգիաների անվտանգության և այլընտրանքային մեդիակրթության ոլորտներում:

ԼՀԱ-ն իրականացնում է մեդիա ոլորտին առնչվող դասընթացներ, հետազոտական գործունեություն, հրատարակում մասնագիտական գրքեր, համացանցում ստեղծում փորձարարական տեղեկատվական հարթակներ և հանդես գալիս զանազան հասարակական նախաձեռնություններով:

### Տեսականը

Կայուն հաղորդակցման ցանց բոլորի համար: ԼՀԱ-ն հավատում է, որ կայուն և ապահով ապագա հնարավոր է, երբ բոլոր մարդիկ իրար հետ ազատ հաղորդակցվելու հնարավորություն ունենան: Եվ այստեղ է, որ մենք մեր կարողությունների չափով փորձում ենք նպաստել առցանց միջոցներից օգտվողների ավելացմանը և տեղեկատվական գրագիտության ծնավորմանը:

### Առաքելությունը

Կազմակերպությունը իրախոսում է տեղեկատվության բազմազանությունը, այլընտրանքային տեղեկատվության տարածումը, խոսքի ազատ և անկախ արտահայտումը, անկողմնակալ լրատվամիջոցների զարգացումը՝ բարձր պահելով լրագրողի մասնագիտական որակները և հասարակության վստահությունը:

### Տարիների ձեռքբերումները

Չեռապայք նետելով գործունեության անցած 11 տարիներին՝ կարող ենք վստահ նշել, որ միշտ հետևել ենք մեր իսկ որոշարժած առաքելությանը, և թե՛ ինքնակրթության, և թե՛ վերապատրաստման ծրագրերի արդյունքում ստացած գիտելիքն ու փորձը, տարբեր նախաձեռնությունների միջոցով փոխանցել ենք Հայաստանի մեր գործընկերներին՝ լրագրողներին, ուսանողներին, դասախոսներին և քաղհասարակության ներկայացուցիչներին: Այս տարիների ընթացքում, փոքր դրամաշնորհների միջոցով, կազմակերպել ենք տասնյակ միջոցառումներ, որոնց մասնակցել են շուրջ 4000 մարդ: ՀԿ-ն ունի նաև փոքրիկ գրադարան՝ հեղինակային գրքերով և ուսումնասիրություններով, որից կարող եք օգտվել [այստեղ](#) [2]:

### JNews.am կայքի մասին

Շատերը մեր կազմակերպության անունը հիշատակելիս ասում են JNews: Նախապատմությունը նրանում է, որ ԼՀԱ-ի կողմից 2008թ. հիմնադրած JNews.am կայքի միջոցով կազմակերպության անդամները տարիներ շարունակ ներկայացնում էր Հայաստանում և տարածաշրջանում ՁԼՄ-ների, խոսքի ազատությանը, առցանց իրավունքին և գրագիտությանը վերաբերող խնդիրներն ու իրադարձությունները, ինչպես նաև տեղեկացնում մասնագիտական որակավորումը բարձրացնող միջոցառումների մասին: Այն նաև սիրված հարթակ էր ուսանողների համար՝ անդրանիկ նյութերը «Ուսանողի հայացք» բաժնում հրապարակելու համար: Կայքում առկա մասնագիտական նյութերն ու հետազոտական աշխատանքներն այսօր էլ պահանջարկ են վայելում մասնագիտական շրջանակներում: Այսպիսի շտեմարան հնարավոր է դարձել ստեղծել «Լրագրողներ հանուն ապագայի» աշխատակազմի, գործընկերների և կամավորների անձնուրաց աշխատանքի արդյունքում: Կայքում առկա են նաև այլ լրատվամիջոցների կողմից թողարկված ակտուալ հրապարակումներ՝ ՁԼՄ-ների մասին:

### Մրցանակներ

- «Լրագրողներ հանուն ապագայի» հասարակական կազմակերպության արդյունավետ գործունեության վրա ապացույց հանդիսացել է մի շարք մրցանակների արժանանալը: Մասնավորապես՝ 2012թ. փետրվարին կազմակերպության «Համացանց, հաղորդակցության հավասար հնարավորություն խուլների համար» ծրագիրը «One World Social Innovation Competition» միջազգային մրցույթում պաշտոնապես ընտրվեց որպես [22 հաջողված ծրագրերից](#) [3] մեկը:

- 2012թ. սեպտեմբերի 28-ին, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից կազմակերպվող «Ոսկե բանալի և ժանգոտ կողպեք» մրցանակաբաշխության ժամանակ, ԼՀԱ-ն ճանաչվեց տեղեկություն ստանալու իրավունքը լավագույնս օգտագործած հասարակական կազմակերպություն: Որպես բաց և լավ աշխատանքի խորհրդանիշ, կազմակերպությանը շնորհվեց [«Ոսկե բանալի»](#) և [վկայական](#) [4]:

- 2013թ. փետրվարի 12-ին «Նա/Նե» ամենամյա լրագրողական մրցանակաբաշխության ժամանակ, Հանրային թղթակցի անվանակարգում [առաջին մրցանակ](#) [5] տրվեց ԼՀԱ-ի թղթակցին:

### Վերջին նախաձեռնությունը

«Լրագրողներ հանուն ապագայի» կողմից 2016թ. գործարկվեց նաև Ampop.am կայքը: Սա Հայաստանում առաջին տվյալների լրատվության հարթակն է, ուր բացատրական ժանրում՝ ամփոփ ձևաչափով և մուլտիմեդիա ծրագրերի համադրությամբ, ներկայացվում են ակտուալ և քննարկվող թեմաները: Դրանք վերաբերում են սոցիալ-տնտեսական խնդիրներին, շուկայական տեղեկացվածության, քաղաքական գործընթացներին, ինչպես նաև առողջապահական, կրթական և այլ ոլորտներին: Ամփոփ մեդիան ունենալով գործունեության մեկ տարվա պատմություն, 2017թ. լրագրողական տարբեր մրցույթներում արժանացավ 4 մրցանակի և բոլորն առաջատար տեղերում: 2017թ. սեպտեմբերին՝ «Թվապատում» ամենամյա մրցույթում, կայքի աշխատանքը [ճանաչվեց լավագույնը](#) [6]՝ «Մեդիա 3.0. տեխնոլոգիաների լավագույն կիրառում» անվանակարգում: Մրցանակներ շնորհվել են նաև [միգրացիայի](#) [7], [աշխատանքային իրավունք](#) [8]ի և [քրաֆիքինգի](#) [9] թեմաները լավագույնս լուսաբանելու համար:

ԼՀԱ-ի կազմակերպած այլ նախաձեռնությունների մասին [այստեղ](#) [10]:

### Չեռնեք մեզ



[11]

[12]

[12]



[13]

[14]

[14]

## Թեմատիկ նյութեր

[Գրիգոր Ամալյան. «Սարք ունենալ-չունենալը դիտեր որպես սեփական հայեցողություն. ոչ թե իրավունքի սահմանափակում»](#) [15]

[2012 թվականի ընթացքում ԼՀԱ-ի իրականացրած հետազոտությունները](#) [16]

[ԼՀԱ-ի ծրագրող One World Social Innovation միջազգային մրցույթի լավագույնների շարքում](#) [3]

[Ditaket.am: Հաշմանդամ աղջկա երազանքն իրականություն դարձավ](#) [17]

[Irazek.am ընտրական ուղեցույցում քաղաքացիների հաղորդագրությունների վերլուծություն](#) [18]

**Source URL:** <http://www.jnews.am/a-gateway-to-jff>

### Links:

[1] <http://www.jnews.am/files/jfflogo.jpg>

[2] <https://issuu.com/jffarmenia>

[3] <http://www.jnews.am/jff-project-on-one-world-social-innovation-award>

[4] <http://www.jnews.am/jff-award-right-to-know%20>

[5] <http://www.jnews.am/anushik-avetyan-got-nane-media-award>

[6] <http://ampop.am/ampop-awarded-in-tvapatum-contest/>

[7] <http://ampop.am/migration-in-armenia/>

[8] <http://ampop.am/labor-rights-in-agriculture/>

[9] <http://ampop.am/trafficking-in-armenia/>

[10] <http://www.jnews.am/jffnews>

[11]

[http://www.jnews.am/files/imagecache/wysiwyg\\_imageupload\\_lightbox\\_preset/wysiwyg\\_imageupload/4/24aaffa670e634a7da9a087bfa83abe6\\_400x400.png](http://www.jnews.am/files/imagecache/wysiwyg_imageupload_lightbox_preset/wysiwyg_imageupload/4/24aaffa670e634a7da9a087bfa83abe6_400x400.png)

[12] [https://web.facebook.com/jnewsarmenia?\\_rdc=1&\\_rdr](https://web.facebook.com/jnewsarmenia?_rdc=1&_rdr)

[13]

[http://www.jnews.am/files/imagecache/wysiwyg\\_imageupload\\_lightbox\\_preset/wysiwyg\\_imageupload/4/5\\_2.png](http://www.jnews.am/files/imagecache/wysiwyg_imageupload_lightbox_preset/wysiwyg_imageupload/4/5_2.png)

[14] [https://twitter.com/JNews\\_JFF](https://twitter.com/JNews_JFF)

[15] <http://www.jnews.am/interview-with-grigor-amalyan>

[16] <http://www.jnews.am/jff-studies-2012>

[17] <http://www.jnews.am/mane-asryan>

[18] <http://www.jnews.am/research-result-of-voters-complains-on-irazek>